

աշխարհին պատկանող իրողութիւններն առնելու այնպէս, ինչպէս որ կան՝ իրենց անմիջական տպաւորութեամբ: Բարձրագոյն առաքինութեան զիմաց անյատակ չարութիւն հանդէս է գալիս միայն այն ժամանակ, երբ մի սխալ, ոչ բարոյական հիմանց վերայ հաստատուած կրթութիւն խճողում է մարդոց մտքերն այնպիսի գաղափարներով և շոյում ստոր հակումներն այնպիսի ներշնչումներով, որ նոցա հոգւոյ մէջ ստեղծուում է միառանձին աշխարհ իւր սեփական կանոններով և սկզբունքներով փակ ամէն արտաքին բարոյական ազդեցութեան առաջ: Ահա արդի քաղաքակիրթ աշխարհը, ինչպիսի՜ հրէշային արտայայտութիւն չեն գտնուում յաճախ նորա լուսաւոր գաղափարներն ու կոկուած զգացմունքները: Արիքովի ճանապարհի վերայ ընկած կիսամահ վիրաւորի մօտից նա ոչ միայն անտարբեր է անցնում ինչպէս այն քահանայն և ղեռացին, այլ մինչև անգամ պատրաստ է մի քանի հարուած էլ ինքն իջեցնել, եթէ վիրաւորը զուխ բարձրացնել՝ Օգնութիւն, մեռնում եմ մի կաթիլ ջուր պապական լեզուիս կանչել համարձակուի: ինչպէս է յանդգնում դա իւր չնչին տեղով ազնիւ անցորդների հանգիստը վրդովել, մեղաւոր է, որ աւազակների ձեռքն ընկաւ: Թող կրէ իւր մեղքի պատիժը և շքնորհակալ լինի աշխարհից, որ իրաւունք է տալիս մի քանի շունչ ևս աւելի քաշելու ու խաղաղ մեռնելու:

Քարհուրելի՜ չէ՞ մտածելն անգամ, որ մարդիկ այսպիսի մտածմունքների և զգացումների ընդունակ են: ոչինչ այնչափ չէ վիրաւորում մեր մարդկային արժանապատուութիւնը, այնպիսի մեծ և արդար զայրոյթ ազնիւ սրտերի մէջ չէ բորբոքում ինչպէս այսօրինակ հայհոյութիւնը արդարութեան և ճշմարտութեան սկզբունքների դէմ: Մենք չգիտենք, թէ ի՞նչ աստիճան զարգացած պէտք է լինի նա, որ Աստուծոյ ս. Հոգւոյ հայհոյութիւն և անբաւելի մեղք համարուի: բայց գիտենք, որ մի դիւական հակումն դէպի այդ կողմ զրեթէ բոլոր մարդոց մէջ կայ և ամենատգեղ

կերպով երևան է գալիս այն գէպերում, երբ նա արտայայտուում է ոչ թէ օտարների, հեռաւորի նկատմամբ, այլ մօտիկ շրջաններում բնական և բարոյական սերտ կապերով միմեանց հետ կապուած անձանց մէջ: Հրեաները սարսափելի մեղք գործեցին իրենց Փրկչին ի խաչ հանելով, բայց պատմութեան դատաւորը՝ արդարութեան հոգին, նոցանից ոչ ոքի այնպէս խստիւ չէ հալածում ինչպէս այն թշուառականին, որ Արդարութեան Արեգակի կենդանարար անմիջական ազդեցութեան ներքոյ այնքան երկար ժամանակ անզգայ մնաց և ճշմարտութեան առաքեալ կոչուած լինելով՝ անօրէնութեան առաջնորդ և իւր Տիրոջ դաւաճան հանդիսացաւ: Աւ արդարութեան ոգին դեռ չէ մեռած: ինչպէս ամէն քրիստոնեայ ժողովուրդի այնպէս նաև մեր պատմութեան մէջ, Ղեռնդ երեցի բերանով կանչում է՝ Աստուրք աւետարանի ուխտը զրժոյնների, նենգաւոր խորհուրդներով իրենց և ուրիշներին խաբողների ետեւից: «Թէ արդարեւ դու կենդանութեամբ զգուխդ ի վերայ ուսողդ ի Հայս տանիս, ապա ընդ իս Տեառն Աստուծոյ չէ խօսեցեալ»:

Կ. Վ.



Ի Ն Ո Ւ Թ Ե Ա Ն Խ Ն Դ Ի Դ Ե Կ Ա Տ Մ Ա Մ Բ Մ Ե Բ
Ե Ի Մ Ի Թ Ա Բ Ե Ա Ն Հ Ա Յ Բ Ե Ի Բ Ո Ւ Ե Ն Յ Ա Ն Վ
Հ Ա Յ Ե Ա Յ Բ Ա :

Այնչափ տարուայ Արարատի Այեմեր համարում (եր. 386) պ. Քարամեան հարկ էր համարել պրոֆ. Նեօլգեկէի մի ծանօթութիւն աւելացնել, հերքելով մեծանուն գիտնականի այն թիւր կարծիքը, թէ Հայոց եկեղեցին միաբնակութիւն է ընդունել, և յարելով թէ «մեր ս. եկեղեցու մասին այս տեսակ մոլորութիւն տարածելուն շատ են նպաստել միարարները (unitor) և դրանց արժանի ժառանգ Մխիթարեանները, որոնք եւրոպացւոց համար հեղինակաւոր անձինք են Հայոց վերաբերեալ խնդիրներում»: Այս նկատողութիւնը առիթ է եղել Մխիթարեան հայ-

րերից մէկին Հացոունի ստորագրութեամբ մի յօդուած գրելու Ռազմավէպի անցեալ մարտամատերի մէջ, ուր նա պէ Բարամեանի վարմունքը անիրաւ հալածանք համարելով իւր միարաւ ութեան դէմ և դառնապէս զանգատուելով ի պաշտպանութիւն նորա բերած փառաւերի մէջ այնպիսի գաղափար է արտայայտում մեր եկեղեցւոյ դաւանութեան մասին, որ մենք անուշադիր և անպատասխան թողնել չենք կարող:

Մենք համարող չենք այժմ յարձակումներն որոնց ենթարկուել են յաճախ տեղի և անտեղի Մխիթարեան հայրերը մերայնոց կողմից, և չունինք անձամբ նոյն իսկ այն կարծիքը, թէ նոքա ըստ ամենայնի արժանի ժառանգ են ունիթոռներէ: Մենք յարգում ենք այդ բազմաշխատ միարանութիւնը և ընդունում որ նա առհասարակ իւր կարողութեան չափով աշխատել է ազգայնական տարրը ամուր պահել կաթոլիկ հայութեան մէջ: Մենք զգում ենք, թէ ինչպիսի ճնշման ներքոյ են գտնուում Մխիթարեանները այժմ իսկ լատին կղերի կողմից և ամենայն շնորհակալութեան արժանի ենք համարում որ նոքա այսպիսի երկարատեւ ամէն առանձնայաակութիւն ունչայնոց ճնշման ներքոյ պահպանել են իրենց ինքնուրոյնութիւնը: Բայց որ նոքա այնու ամենայնիւ մեծապէս նպաստել են մեր եկեղեցւոյ, մեր ամբողջ պատմութեան մասին սխալ գաղափարներ տարածելուն՝ այդ է որ անուրանալի է ըստ մեզ և որ մենք մի քանի գծերով պէտք է ապացուցանել աշխատենք: Մենք չենք մտածում ամենեւին, թէ նոքա զիտակցարար պատմական յիշատակարաններ կեղծելով են այդ արել: Ընդհակառակն համոզուած ենք և Սեփեանի հարց մատենագրանում ունեցած մեր մի քանի օրուայ փորձով վկայել կարող ենք, որ նոքա այս կէտում առհասարակ բարեխիղճ և հաւատարիմ են գտնուել: Սակայն մենք զիտենք, թէ ինչ ասել է կաթոլիկ լինել՝ դաստիարակուել այն ոգով, որ ընդունակ է զարնում մարդոց սեւ սպիտակ տեսնե-

լու, և մեզ արդահատանք է պաճառում Հացունու այն՝ անուշտ անկեղծ, հաւատարիմ է Պարիզորի Լատուածը դարերէ ի վեր թողնել է զմեզ երեսէ՝ նորա համար որ մենք ընդհանրական եկեղեցւոյ վարդապետութեանց, հակառակ ենք ընթանում և չենք ընդունում որ զանազան Յովհաննէս ԺԻՎ. և ԻԳՎ. ներքին թէոփիականեր, Աղքատագր Լորջիաներ՝ անսխալական փոխանորդներ և գլուխ են եղել ընդհանրական եկեղեցւոյ իսկ մեր Լուսաւորիչները, Իմաստասերները, Շնորհալիները՝ նոցա հաւատարիմ խոնարհ որդիք և սպասուորներ:

Եւս այս ոգով է, որ պատուարժան յօդուածագիրը հարկ է տեսնում զայստատանայց եկեղեցին որոշել ի հին և ի նոր հնով իմանալով մեր բոլոր հարքը՝ Լուսաւորչէն մինչև ի ժողովն Քաղկեդոնի և նոցա այն յաջորդները՝ որք ընդհանուր եկեղեցւոյ և հաւատոց միութիւնը սիրել և պաշտպանել են՝ մինչև ի Գր. Տղայ և այլն: Իսկ նորով յետ ժողովոյն Քաղկեդոնի զայթ ի զայթ զնացող մասն մինչև ցայսօր: Սակայն նա սխալուում է ենթադրելով թէ պէ Բարամեանը կամ որ և է մէկը մեզնից չգիտէր որ Մխիթարեան հայրերը վաղուց ի վեր հարկ են տեսել այսպիսի որոշումն զնելու՝ մինչև ԺԻՎ. դար եղած մեր եկեղեցւոյ հայրերին երկաքնակ իսկ յետոյ եկողներին մոլորեալ հռչակելու: Մեր բողոքը նոյն իսկ այդ անհիմն տեսութիւնից առաջ եկած մոլորութեան դէմ է՝ այն պարզամիտ մոլորութեան դէմ որի տեսակէտով միարնակութիւնից և երկարակութիւնից դուրս մի երրորդ տեսակ դաւանութիւն չկայ և չի կարող լինել: Իրողութիւնն այն է՝ որ մենք ուղղադաւան հայերս այդպիսի հին և նորի բաժանումն մեր եկեղեցւոյ մէջ մտացածին համարելով և նախապաշարմունք, հաստատում ենք, որ ուրեմն ոչ թէ Հայաստանեայց նոր եկեղեցին այլ առհասարակ Հայաստանեայց եկեղեցին իրրե մի անբաժանելի ամբողջութիւն հաղորդութեան տարիներէ ի վեր կոխ մղած է երկաքն-

նակութեան դէմ և ի լուր արեւմտից ազա-
ղակեր է միշտ՝ մի բնութիւն» ի նկատի ու-
նենալով զաղափարները և ոչ ըստերը, և սա-
կայն հեռու մնալով միաբնակութիւնից: Մեր
այս համոզմունքը նեղ ազգասիրական հայ-
եացքներից կամ անհասկացողութիւնից չէ
յառաջ գալիս և իւր հիմք ունի ոչ թէ կա-
մայական ենթադրութիւններ, այլ հաստա-
տուն պատմական փաստեր: որոնց համար վը-
կայ կարող ենք հօշել արդի եւրոպական պատ-
մագիտութեան ամենաառաջնակարգ և ան-
կողմնապահ ներկայացուցիչներին: * Եւ մենք
կասենք ու կրկինենք որ մի զուտ պատմական
սխալ է միայն թէ և շատ տարածուած
սխալ՝ կարծել՝ թէ «մի բնութիւն» դա-
ւանելը նոյն է, ինչ որ միաբնակ լինելը, թէ
Աւերեղ Աղեքսանդրացին Քաղկեդոնի ժողո-
վում իբրեւ ուղղափառ ճանաչուած լինելով՝
նոյն վարդապետութիւնն ունի, ինչ որ այդ
ժողովրդ և թէ ուրեմն մեր եկեղեցին «մի բը-
նութիւն» դաւանելով նոյն խմբաւոր, ինչ որ
Աւերեղ կամ միաբանակ պէտք է համարուի
ըստ ըստինս կամ երկարակ ըստ գաղափարին:

Միաբնակ անունը պատմութիւնն ընծա-
յել է Ազիպատոսի և Եսորիքի այն արեւելեան ե-
կեղեցիներին: որոնք Քաղկեդոնի ժողովի պատ-
ճառաւ նորա սահմանած դաւանութիւնը հա-
կառակ դանելով Աւերեղ Աղեքսանդրացու Ե-
փեսոսի ս. ժողովում պաշտպանած ճշմարիտ
վարդապետութեան, երկարատե վէճերից յե-
տոյ բաժանուել են ընդհանուր եկեղեցուց և
աղգային սկզբունքների վերայ առանձին կաղ-
մակերպութիւն ընդունել: Թէ և նոցանից ոչ
մէկը հետեւող չէ եղել Լատիքէսի, ինչպէս
սխալմամբ կարծում են շատերը բայց նոքա

մի ընտելեան ուսումը պաշտպանելով՝ Քը-
րիստոսի մէջ աստուածային կողմն առհա-
սարակ աւելի են շեշտել և այդպէս ար-
տաքիններին տեղի կամ անտեղի առիթ
տուել պնդելու թէ նոքա մի ընտելեամբ
աստուածայինն են միայն հասկանում մարդ-
կայինը եղծում: Եյս եղբակացութեան ա-
ւելի նպաստել է մանաւանդ այն հանգա-
մանը, որ միաբնակ եկեղեցիները շատ չան-
ցած արաբական լուծի ներքոյ ընկնելով
դադարել են գրեթէ ընդհանուր եկեղեցու
հետ կենդանի յարաբերութիւն ունենալուց և
հետզհետեւ տղիտութեան խաւարի մէջ ընկղ-
մել: ուստի այն խնդիրները որոնք Աւերեղ
Աղեքսանդրացու և նորա ժամանակակիցների
համար կենդանի հաւատի հետ անմիջական
կապ ունէին և կրօնական բուռն հետաքրքրու-
թեան ու գիտնական ուսումնասիրութեան
առարկայ էին՝ մեռեալ տառ են դարձել գրեթէ
այդ եկեղեցիների համար՝ բանաձևեր, որոնք
իբրեւ դաւանանք պարտաւորեցուցիչ էին հա-
մարուում բայց որոնց խակական միտքը հա-
կանալ և բացատրել ոչ որ այլ ևս չէր կարող:

Հայոց եկեղեցին բոլորովին տարբեր ան-
ցեալ է ունեցել: Այդպէս կոչուած միաբնա-
կան կամ եւտիքական վէճերի մէջ նա չէ մաս-
նակցել և չէր էլ կարող մասնակցել, որովհե-
տե քաղաքական հանգամանքների շնորհիւ
վաղուց արդէն (ըստ մեզ՝ ի սկզբանէ և եթ)
բաժանուած ընդհանուր եկեղեցուց և վարչա-
կան տեսակէտից անկախ՝ նա տարբեր կեանքով
էր ապրում և ուրիշ աւելի հետաքրքրական
կրօնական խնդիրներով էր զբաղուած: Մեր հա-
մոզմամբ այդ վէճերի մասին առաջին անգամ
իւր վճիռը կայացրեց ոչ թէ 491 թ. -ին
Բաբկէնի գումարած Աղադաշապատի ժողո-
վը, ինչպէս ընդունուած է մեր մէջ Չամ-
չեանի հետեւողութեամբ, այլ Օ. դարու կէ-
սին Ներսէս Բ. Ետարակեցու գումարած
Դուլինի ժողովը, ինչպէս մի ուրիշ անգամ
ապացուցանելու յոյս ունինք՝ հակառակ Չամ-
չեանի փաստարանութեան: Եւ այն անգամից
և եթ մեր եկեղեցին այս վէճերի վերայ նա-

* օր. A. Harnack — Lehrbuch der Dogmengeschichte, B. II S. 377. ann. 3—Freiburg i. B. 1894. — ուր Հայոց եկեղեցու մասին ասած է. Թէ նա «միաբնակ չէ, այլ սի-
րեղեան»: Որպէս զի շատու թէ բողոքական գրուածք է
այդ եւ ուրեմն նեղմակութիւն չունի, յեշնայ միայն, որ
նորա գիտնական արժէքը շատ բարձր գնահատողներից եւ
իւր դասախօսութեանց մէջ շարունակ նորանից օգտուողնե-
րից մէկն է նաեւ Դիւլէն, ժամանակակից կաթոլիկ աշ-
խարհում գրեթէ ամենանշանաւոր եկեղեցական պատմիչը
եւ ամենապատկառելի անձնատրուծիւններից մէկը:

յիւ է իբրեւ աւելորդ բանաբաղութիւնների և նախնի ընդհանրական եկեղեցւոյ ողջամիտ ու լրացման անկարօտ վարդապետութեան մէջ մտցրած ներմուծութիւնների վերայ. ուստի ևս նա հրաժարուեցաւ նոցա կամայական բացատրութիւնները գաւանդութիւն դարձնելու իւր համար և որոշեց պահպանել նոյն դրութիւնը ինչ որ պարզաբանել և հայոց ընդունած վերջին տիեզերական ժողովի միջոցաւ իշխող էր դարձրել կորովին Սիւրբ Եղեքսանդրացի: Այս դրութիւնը որի արտայայտելու համար Սիւրբ զործ է ածել «մի բնութիւն լանին մարմնացեալ» կամ «մի բնութիւն յերկուց» — բանաձևները՝ յենուում է այն գաղափարի վերայ թէ մարդեղութիւնից յետոյ Քրիստոսի մէջ ոչ մի բաժանումն զնել չէ կարելի. թէ քրիստոնէական հաւատը պահանջում է աստուածայինը և մարդկայինը այնպէս սերտ կերպիւ միացած ընդունել, որ ոչ մի մարդկային կիբք կամ զործողութիւն առանց աստուածայնի մասնակցութեան տեղի ունեցած չլինի՝ և ընդհակառակն. թէ վերջապէս մեր մտքի համար անըմբռնելի է առանձին առանձին բնութիւններ առանց անձնաւորեալ կերպաւորութեան կամ մի անձն, որ երկու ներգործութիւն և երկու կամք ունի՝ ուստի և բնութիւնների բաժանումն ակամայ զէպի անձերի բաժանումն պէտք է տանէ: Իսկ այն առարկութիւնը, թէ Աստուած և մարդ, իբրեւ երկու տարբեր բնութիւնների, միանալով մի բնութիւն կազմել չեն կարող՝ անգոր է բոլորովին. որովհետեւ նախ ոչ թէ մարդկայինը իբրեւ անկախ մարդեղութիւնից առաջ ևս առանձին գոյութիւն ունեցող՝ բնութիւն միացել է աստուածային բնութեան հետ, այլ լանն Աստուած մարմին է առել և երկրորդ՝ մարդու մէջ նոյնպէս հոգին ու մարմինը իբրեւ երկու տարբեր բնութիւններ միացած են իրար հետ, բայց որ ոչ դի մտքից չէ անցնում, թէ մարդ երկու բնութիւն կամ երկու կամք և ներգործութիւն ունի՝ մարմնական և հոգեղէն, և ուրեմն՝ Քրիստոս, իբրեւ կատարեալ Աստուած և կատարեալ մարդ, երեք բնութիւն՝ աստուա-

ծային, հոգեկան և մարմնական: Այսպէս ահա եթէ մեր եկեղեցին այս խնդրի նկատմամբ իւր ունեցած համոզման համար իրաւամբ իշխուելան անուանել կարելի է՝ անտեղի է միանգամայն միաբնակ անունը տալ նորան, որովհետեւ այդ անունը մի պատմական մակդիր է այն եկեղեցիների համար միայն, որոնց ինքնուրոյն գոյութիւնը միաբնակութեան վիճակի հետ է կապուած, և տալիս է այն սխալ գաղափարը, թէ այդպէս կոչուածները մի բնութիւն ասելով աստուածայինն են հասկանում և մարդկայինը երեւութական ինչ ընդունում:

Աւելորդ ենք համարում երկարացնել մեր խօսքն այս խնդրի մասին, որովհետեւ Արարատի սոյն համարին կից տպուած Յովհան Լամատասիրի ճառի մէջ շատ զեղեցիկ բացատրուած է այդ խնդիրը այն ոգւով, ինչ ոգւով մեր երջանիկ նախնիք ըմբռնել են: Ահա հասարակ մեր հասկացողութեամբ ընդունելու համար, որ եկեղեցւոյ գլխաւոր ներկայացուցիչները մինչև ի Գրիգոր Տղայ եւ այլն երկարնակ են եղել կամ որ նոցանից մէկն ու մէկի մտքով անցել է, թէ Հռոմի եպիսկոպոսն է ընդհանրական եկեղեցւոյ գլուխը և իւր իշխանաւորը՝ պէտք է պատմութեան մասին կամ ամենեւին գաղափար չունենալ, կամ որպէս զի արմատացած նախապաշարունակները պահպանուին՝ կամաւ ինքնախաբուութեան ենթարկել իրեն: Այսպիսի ինքնախաբուութեան մէջ Միթիարեան հայրերը Չամչեանից սկսած սովոր են, իբրեւ գլխաւոր ապացոյց իրենց պաշտպանած դրութեան, Յովհան Օձնեցու օրինակը և յատկապէս նորա Ընդդէմ Երեսութեանաց ճառը յառաջ բերել, որ և կրկնում է Հացունին և պղտոր աշքերի տեսութիւն է համարում Ե. Տէր Միքելեանի այն կարծիքը,* թէ Օձնեցին այդ ճառի մէջ մի բնութեան ուսումն է պաշտպանել, իսկ որովհետեւ այն բոլոր հարցերի քննութիւնը որ Չամչեան Յովհան Օձնեցու մասին արծարծել է, ինչպէս նաև Ներսէս Շնորհաւոր, նորա յաջորդների և այլոց այս մասին վերաբերեալ

* Հայաստանեայց եկեղեցին եւն. եր. 140:

խնդիրները առանձին ընդարձակ ուսումնասիրութեանց նիւթ է՝ մենք կանգ կառնենք այստեղ միայն ընդդէմ՝ Երեսույթականաց ճառի վերայ և նորա դիմաց դնելով Խմաստասիրի միւս մեր այժմ հրատարակած ճառը՝ կը հրաւիրենք, որ ամէն պարզ աչքով խնդիրը դիտող ինքը վկայէ, թէ նոցա հեղինակը մի ըրնութիւն է ուսուցելու, թէ երկու ընութիւն։ Եւ որպէս զի խնդիրն աւելի պարզ լինի՝ յառաջ կրբերենք համառօտակի այն կարծիքը, որ ունինք Յովհանն (Օ)նեցու մեր պատմութեան մէջ կատարած դերի մասին և որ մասամբ արդէն երեք տարի առաջ մեր գերմաներէն զրուածքի մէջ յայտնել ենք։ *

Ներսէս Բ. Աշտարակեցու օրով վերև յիշած Դուինի ժողովում ևրկու բնութեան ուսումը մերժելուց յետոյ, Հայոց եկեղեցին կամայ ակամայ ընդհարումներ սկսաւ ունենալ քաղկեդոնականների հետ և յարձակումների ենթարկուել նոցա կողմից։ ** Պատմական մի շարք ակնարկներից եզրակացնել պէտք է, որ Հայաստանի մեծագոյն մասի Պարսից տիրապետութեան ներքոյ գտնուիլը և ժամանակակից պարսիկ տիրապետների բռնած քաղաքականութիւնը քիչ չնպաստեց սաստկացնելու համար Քաղկեդոնի ժողովի պատճառաւ Յունաց և Հայոց մէջ ծագած հակառակութիւնը։ Արկարատե մաքառման միջոցին գտնուեցան արդարեւ մեր կողմում զանազան հանգամանքներից զրդուած գայթ ի գայթ զնացողներ։ Բայց եկեղեցին իբրև ամբողջութիւն հաւատարիմ մնաց իւր մի անգամ զաւանած սկզբունքներին և հակառակ դաւանական խտրութեան՝ յարաբերութիւն պահպանելով միշտ յունական գիտութեան կեդրոնավայրերի հետ, կենդանի պահեց իւր մէջ նաեւ քրիստոնէական գիտութիւնը և ունեցաւ շարունակ այնպիսի բարձր հոգու և ընդարձակ գաղափարների տէր ներկայացուցիչներ,

որոնք իրանց եկեղեցւոյ դաւանութիւնը շատ լաւ ըմբռնել, բացատրել և պաշտպանել կարող էին։ Մեր եկեղեցւոյ ազդեցութեան ներքոյ Աղուանից եկեղեցին ևս ազատ մնաց քաղկեդոնական խմբից, բայց Արաց բաժանմամբ մենք շատ զգալի կորուստ ունեցանք։ Թէ ինչպէս պարզ կերպով էին ըմբռնում մեր հայրերը նոյն իսկ այս սկզբնական ժամանակներում իրենց պաշտպանած դատի և դաւանութեան էութիւնը՝ այդ պարզ կարելի է տեսնել Հայոց և Արաց մէջ փոխանակուած գրութիւններից, որոնց մի մասը միայն հրատարակուած է Աւստանէսի պատմութեան միջոցաւ, իսկ միւս մի քանի կարեւոր յիշատակարաններ դեռ յարմար առթի են սպասում ի լոյս ընծայուելու Մայր Աթոռի մատենադարանի ձեռագիրներից։

Սակայն չհղուենք բռն խնդրից։ Մեր շատ ձեռագիրների մէջ գտնուում է. «Յովհաննու Խմաստասիրի Հայոց կաթողիկոսի սակս ժողովոցն, որ եղեն ի Հայաստան վերնագրով մի գրութիւն, ուր՝ վեց ազգային եկեղեցական ժողովներ յիշելուց յետոյ՝ Խմաստասիրի բերանից սասած է, թէ նա կաթողիկոսանալով իբրև Աղիայի յաջորդ՝ Եւ ժողով է գումարել Մանաղիկերում Հայոց քննութեանին, բաղմաթիւ հայ հոգեւորականների և վեց ասորի եպիսկոպոսների զործակցութեամբ, ուր խլեցաք (սասած է) զորոմն ապականութեան, որ սփռեալ էր յԱզրայ այսր, վասն որոյ բազումք կործանեցան յերկարնակ հաւատն, և մերժեցաք զախտ ժողովոյն Քաղկեդոնի, և հաստատեցաք դաւանութիւն հաւատոյ, վասն զի խոստովանիմք մի բնութիւն Բանին և մարմնոյն՝ Աստուած կատարեալ և մարդ կատարեալ, և միաւորեալ անբաժանաբար յստակ միացեալ բնութեամբ։ Չամէնան աշխատել է հերքել այս գրութեան վաւերականութիւնը, և մենք համաձայն ենք, թէ նորա ոճը և զանազան ձեռագիրների մէջ եղած խոշոր տարբերութիւնները ցոյց են տալիս, որ նա յամենայն դէպս աղաւաղուած է և գուցէ ամենեւին Օնեցու զործը չէ. բայց նա չի

* Die Paulikianer P. 67.—Leipzig 1893:

** Մեր ձեռքը հասել է մի շատ կարեւոր պատմական յիշատակարան այս շրջանից, որ եւ կաշխատենք շոտով տպագրութեան ընծայել։

կարող նաև **Օձնեցուց** առաջ ապրող մի **Յովհանն Մանազկերտցու** գործ լինելը որովհետև այդպիսի մէկ անձն՝ վեց տարով տեղապահ **Սերաէս Շինողի** կաթուղիկոսութեան ժամանակ և **Մանազկերտի** ժողովի գումարող, ամենեւին գոյութիւն չէ ունեցել այլ **Չամչեանի** հնարածն է՝ առանց որ և է պատմական փաստիւ **Լյս** գրութեան մէջ պատմուած իրողութիւնը որ **Յովհանն Օձնեցին** ժողով է գումարել **Մանազկերտում**՝ նորա անվաւրականութեամբ չի հերքուում այլ հաստատուած է վասն ժողովոյն որ եղեն ի **Հայս** ի սրբոյն **Գրիգորէ** սկսեալ՝ վերնագրով մի ուրիշ գրութեամբ որ հաւանականաբար աւելի հին է և ճշգրիտ պատմութեան կնիք է կրում* ինչպէս և ուրիշ բազմաթիւ պատմական յիշատակութիւններով։ **Հարցը** կարող է միայն այն մասին լինել թէ արդեօք **Ինչ** է եղել այդ ժողովի քննութեան բուն առարկան և նպատակը բայց այդ հարցով զբաղուելը մեզ շատ հեռու կրտանի։ **Մենք** կրկամենայնք միայն այն հարցին պատասխանել թէ արդեօք **Օձնեցին** առհասարակ կարող է **Քաղկեդոնի** ժողովը մերժած և զորոմն ապականութեան որ սփռեալ էր **Աղբայ** այսո՞ դուրս խլած լինել։

Չամչեան այս հարցին բացատրական պատասխան է տուել առարկելով թէ **Օձնեցու** նախորդ **Լղիա** կաթուղիկոսն արդեն ծայրահեղ հակաքաղկեդոնական էր և թէ նորա կռիւը ընդհակառակն միաբնակների դէմ է եղել։ Բայց մենք այն կարծիքն էինք յայտնել նախ որ եթէ **Օձնեցին** **Լղիայի** նման հակաքաղկեդոնական կաթուղիկոսից յետոյ քաղկեդոնական եղած լինէր՝ անկարելի էր որ պատմութիւնը ոչ միայն այդ փաստը չվշէր այլ և բոլորովին հակառակը յիշատակէր նորա մասին և երկրորդ որ երեւութականների կամ աղանդաւոր միաբնակների դէմ լինելը չէ նշանակում թէ նա միեւնոյն ժամանակ չէր կարող նաև երկաբնակների դէմ լինել։ **Օձ-**

նեցու մատուցած մեծ ծառայութիւնն այն է, առել էինք մենք որ նա երկու վտանգների մէջ մի միջին ծանապարհ է գտել և **Հայրենի** աւանգութեանց վերայ հիմնուելով՝ ընծայել է ի նորոյ իւր եկեղեցուն մի առանձնաշատուկ բնաւորութիւն որ և մնացել է նորա թանգազին սեպհականութիւնը։ **Երբ** **Օձնեցու** մեր հրատարակած ծառք մի նոր հաստատուն փաստ է այս կարծիքի համար։ **Իսկ** թէ **Ինչ** է նշանակում վերեւ բերած այն պատմական յիշատակութիւնը որ նա **Լղից** յետոյ իւր նախորդների օրով մնացած խմորը մէջտեղից վերցրել է՝ աշխատենք այդ ևս մի քանի խօսքով պարզել։

Քաղկեդոնի ժողովից յետոյ նոյն իսկ յունական եկեղեցին անմիջապէս չհաշտուեցաւ երկու բնութեան ուսման հետ այլ նորա մէջ ևս յառաջ եկան երկու կուսակցութիւններ և զրեթի մի ամբողջ դար դեռ խնդիր էր թէ արդեօք որ կողմը կ'յաղթէ։ **Ինչպէս** պրոֆ. **Լ. օօֆս** իւր նշանաւոր **Leontius von Byzanz** գրքով ցոյց է տուել՝ **Սկեռ** անապատի կրօնաւորները և յատկապէս **Լ. ևս** **Իրեզանդացին** եղան որոնք պղատոնական փիլիսոփայութեան տեղ արիստոտելեանը դնելով և «խաչեցար»-ի դադափարը պաշտպանելով միջոց տուին երկու բնութեան ուսումը **Վիւրեղ Եղեբանդրացու** հասկացողութեամբ բացատրելու և յունական մտածողութեան համար ըմբռնելի կացուցանելու։ իսկ **Յուստինիանոս** կայսեր 553 թուին գումարած **Լ. տիեզերական** անուանեալ ժողովը նուիրագործեց նոցա վարդապետութիւնը և այդպէս ծանապարհ հարթեց երկու կուսակցութիւնների իրար մօտենալու։ **Սակայն** արեւելքում մնում էին դեռ մի քանի առանձնացած եկեղեցիների որոնց թուում նաև **Հայոց** եկեղեցին որ վրացիների բաժանումից յետոյ աշխատում էր իւր ներքին ոյժերը ժողովել և որոշ ինքնուրոյն կերպարանք ստանալ մինչդեռ **Իրեզանդական** կոյրների քաղաքականութիւնը պահանջում էր ըստ կարելւոյն մօտ և մի լինել արեւելեան քրիստոնեաների հետ։ **Ուստի**

* Գուցէ այս համոզող յիշատակարանն է նաև ծառայել իբրեւ հիմք միւսի համար։

երբ Հերակլ կայսրը յաղթական զնացքով Պարսից անութեան վերայ արշաւեց և խաչի յաղթանակը կանգնեց արեւելքում՝ բնական է, որ ձգտէր այդ կերպով ձեռք բերած հեղինակութիւնը և ոյժը գործ զնելու յօգուտ միութեան գաղտնաբերի։ Արպէս զի կարելի լինէր մէջտեղ մի բանաձև զնել, որին երկու հակառակ կողմերն ևս համաձայնէին, նա ժամանակակից Ա. Պօլսոյ Սերգիոս պատրիարքի խորհրդով որոշեց դառանել՝ թէև երկու բնութիւն՝ Քրիստոսի մէջ, բայց միացած մի աստուածամարդկային ներգործութեամբ, որով 'Նա թէ աստուածա՝ յինը և թէ մարդկայինը գործել է։ Իսկ երբ այս մասին ևս վէճեր յառաջ եկան, որոշուեցաւ ներգործութեանց խնդիրը թողնել և խոստովանել մի կամք՝ Քրիստոսի մէջ։ Ըստ որոշման համաձայն էր մի կողմից Հռոմի Անորիոս Ե. եպիսկոպոսը, միւս կողմից Լղեքսանդրիոյ Սիւրոս և Լնսիոքի Լթանոս պատրիարքները միջոցաւ համաձայնութիւն կարելի եղաւ կայացնել արեւելեան միաբնակները մեծամանութեան հետ։ Բնականաբար Հայոց Աթուղիկոսի հետ կայացած համաձայնութիւնն ևս նոյն հիման վերայ է եղել, այսինքն՝ Լզրի ընդունել է քաղկեդոնական ուսումը ոչ այնպէս, ինչպէս այժմ Հունաց և Հռոմացեաց եկեղեցիներն ընդունում են, այլ ինչպէս Հերակլի օրով էր բացատրուում՝ երկու բնութիւն և մի կամք։*

'Նոյն իսկ Հերակլի և աւելի նորա որդի Աստանդ Բ. ի ժամանակ մեծ հակառակութիւններ յառաջ եկան այդ բացատրութեան դէմ և վէճը շարունակուեցաւ մինչև 680 թ.՝ երբ Աստանդին Պողոնատոսի հրամանով այդպէս կոչուած Օ. տիեզերական ժողովը դումարուեցաւ Ա. Պօլսոյ ուր որոշուեցաւ ոչ միայն երկու բնութիւն այլ և երկու ներգործութիւն և երկու կամք խոստովանել, ու բանադրել նոցա, որոնք համաձայնել էին Հերակլի հետ մի ներգործութիւն և մի կամք խոստովանելու։ Բանադրուողների մէջ

ջրն էր հարկաւ նաև անսխալական Անորիոս պատրիարք։

Յովհանն Օձնեցին կաթուղիկոս եղաւ ուրեմն այնպիսի մի ժամանակի երբ մեր և Հունաց եկեղեցւոյ մէջ որ և է միութեան խօսք լինել չէր կարող։ Հայերն արդէն, ինչպէս յայտնի է, խիստ դժկամակ էին դէպի Լզրի ընդունած զրութիւնը և 'Ներսէս Գ. Շինողի օրով 'Պօլսում դումարուած ժողովով խղեցին զրեթէ ամէն կապ քաղկեդոնականութեան հետ։ Քանի որ նոքա դեռ մասամբ Հունաց քաղաքական ազդեցութեան ներքոյ էին գտնուում բնական է, որ չկարողացան մի որոշ հաստատուն զիրք բռնել և Լզրի օրից մտած խմորի մի մասը մնաց նոցա մէջ։ Ըստ խմորը կաղմում էին թէ այն մի խումբ հայերը, որոնք ոչ յունական եկեղեցուն էին պատկանում, որովհետև մի կամքի վարդապետութեան հետեւող էին և ոչ Հայոց եկեղեցուն, որովհետև երկու բնութիւն էին ընդունում (ինչպէս օր. Մարտիրոսները), և, ինչպէս Օձնեցու հրատարակած կանոնները ցոյց են տալիս, մի շարք ծիսական նորմուծութիւններ, յատկապէս ծննդեան տօնի և հաղորդութեան տարրերի վերաբերեալ։

Միւս կողմից յունաց դէմ եղած ատեւութիւնը մղում էր ոմանց քաղկեդոնականութիւնը հերքելու համար միջոցների մէջ խտրութիւն չլնել, այլ օգտուել նոյն իսկ ծայրայեղ միաբնակների, ինչպէս Յուլիան Հալիկարնացու, զրուածքներից՝ հակուելով այնպէս դէպի մի տեսակ երեսութալան մերութիւն։ Ընթող իւր դարում Հայաստանը պատերազմների ասպարէզ լինելով՝ ոչ մի յարմարութիւն չէր ներկայացնում եկեղեցւոյ վարչչների համար այս ներքին խռովութիւնները վերացնելու։ Բայց երբ արաբացիների վերջնական տիրապետութեամբ համեմատաբար խաղաղութիւն հաստատուեցաւ երկրի մէջ՝ Յովհանն Օձնեցու նման մի հայրապետ էր պէտք, որ զրութիւնն ըմբռներ և դարման տանէր, և նա եղաւ այդպիսի մի մեծ հայրապետ՝ բառիս ընդարձակ նշանակութեամբ։ Ա. երանո-

* Նամ. Ա. Հէր. Միքելեան Հայաստանաց եկեղեցին
- ԳԼ. Ժ.

րողելով հայրերի աւանդած եկեղեցական կարգերը և ամբողջացնելով՝ նա ընծայել է մեր եկեղեցւոյ վարչական և ծիսական կազմակերպութեան գրեթէ այն ամբողջ ստուերագիծը, որի վերայ հաստատուած է սա մինչև այժմ: Իսկ մերժելով մի կողմից Նրեւութական միաբնակութիւնը միւս կողմից երկաբնակութիւնը՝ նա իւր ընդդէմ՝ երեւութականաց և ընդդէմ՝ դասանողաց զմի քրիստոս յերկուս ընտրութիւնըս ծառերով կրկին յուշարձաններ է կանգնեցրել մեր եկեղեցւոյ ողջամիտ վարդապետութեան համար:

Ի՞նչ է սովորեցնում ուրեմն Օձնեցին ընդդէմ՝ երեւութականաց ծառի մէջ: «Արդ՝ յայտ է թէ անհատանկի միաւորութեանցն» և ոչ բնութեանցն այլայլութիւն առաջնորդեն մեզ զմի ասել ընտրութիւն մարմնացեալ Ռանին զի որ ի Հօրէ անմարմին Ռանն էր ի Սաբիամայ սրբոյ կուսէն՝ այսինքն ի մարդկային բնութենէս՝ մարմին զգեցաւ և զնոյն միաւորեալ ընդ իւրումն դիմի և բնութեան, մի դէմ և մի բնութիւն ասի և հանդերձ մարմնովն Այլ ի միութենէն զերկաքանչիւրոցն ուրանամ զկատարելութիւն և ոչ յաղագս երկաքանչիւրոցն կատարելութեան զմին հրաժարիմ՝ ասել կատարելութիւն միութիւն յանայլայլութեան և անայլայլութիւն ի միութեան խոստովանելով Եթէ այդպէս ասեմք՝ ասեն, երկուս լինիմք ասացեալ դէմս և երկուս բնութիւնս: Դարձեալ փախչելով ի սնտի երկիւղէ, ի մեծագոյնն անկանխ չար: Եթէ յերկուց ըստ բնութեան ոչ կամիս ասել զմինն, կարի յոյժ չարաչար ըստ բնութեան զմին գտանիս ասացեալ բնութիւն: Այլ անմարմին բնութիւն աստուածային Ռանին ըզմարմնական բնութիւնն ի կուսէն ընկալեալ ընդ Ինքեան միաւորեաց. որ է ըստ բնութեան յերկուց՝ աստուածային և մարդկային, իսկ ըստ միաւորութեան մինս: * Դաւանանքների պատմութեան հետ փոքր ի շատէ մօտիկ ծանօթութիւն ունեցող մէկը խիստ պէտք է

զարմանար իմանալով, թէ այս և նման տողերի մէջ քաղկեդոնական երկաբնակ վարդապետութիւն գտնողներ կան. բայց Հացունին և միւս Միթիթարեան հայրերը ոչ միայն այդ են գտնում այլ և զայրանում ու զրաքանդութիւն են անուանում այն կարծիքը, թէ Օձնեցին անխայանի կերպով և կրկին ու կրկին անգամ մի ընտրութիւն է քարոզում այդտեղ: Սակայն ինչքան և անսխորժ լինի նոցա, այնուամենայնիւ ստիպուած ենք ասել, որ Արեւել Աղեքսանդրացու, Անտիոքացիների Եփեսոսի ու Քաղկեդոնի ժողովների անունները լսած պէտք է չլինել՝ պնդելու համար, թէ յերկուց ընտրութեանց մի ընտրութիւն կամ մի անձն յերկուս ընտրութիւնս ասել մի և նոյնն է: Զի՞ երբ Օձնեցին Երեւութականների յանդիմանում է այն մնոտի երկկողի համար, որ նոքա չկամենալով յերկուց ըստ ընտրութեան ասել զմինն՝ մեծագոյն չարեաց մէջ են բնկնում՝ չարիք էր համարում անշուշտ (թէ և զուցէ աւելի փոքրը) երկուս ընտրութիւնս ասելն ևս, որից նոքա խոյս տալ էին կամենում: «Մի զմին ասելով՝ զբնութեանցն կամակորեացուք զաղբիւրս, և մի՛ յասելոյ անտի զերկախումբն՝ պատառել կամելով զմիաւորութեանն պատմութեան»։ «Օյ ի եթէ այս երկուք զեկեղեկագոյն հաւատոյ ոտիւք առ ճշմարտութիւնն ի վեր կանգնեալ ոչ հաստատիս, առ որ և յեւուցուս առ մին ի նոցանէ՝ կաղ գտանիս առ խոստովանութիւն ճշմարտութեան»։ Միթէ բոլորովին պարզ չեն այս խօսքերը և եթէ աւելի յաճախ կարդացուին մեր եկեղեցականների կողմից, ինչպէս ցանկանում է Հացունին, Միթիթարեան հայրերը կարող կլինէին ամբողջ աշխարհին հաւատացնել, թէ քաղկեդոնականութիւն է քարոզուած նոցա մէջ: Սենք թողնում ենք, որ Հացունին ինքը համեմատէ նոցա մեր այժմ հրատարակած ծառի հետ և հետաքրքրութեամբ սպասում ենք՝ արդեօք պէտք է փորձէ՞ նա ապացուցանելու և ինչ հիմունքներով, թէ այդ երկու տեղերում խօսողը նոյն անձը չէ, որի համոզմամբ՝ «Այսպէս յերկուց բնութեանց մի բնութիւն

* Տ. Յովնանու իմաստասիրի Օձնեցւոյ մատենագրութիւնը. եր. 116 եւ 122.—Վննետիկ 1854:

Բանին մարմնացելոյ խոստովանի ամենայն աստուածասէր Հոգի ըստ որում և միտք մարդոյ ոչ բաժանի յիւրմէ մարմնոյն, այլ մի դէմ մի բնութիւն բովանդակ մարդն: Այս ծառի հակաքաղկեդոնական լինելու մասին արդէն կարծեմ Մխիթարեան հայրերը ոչ մի կասկած պէտք է չունենան, բայց զուցէ նոքա սորա վաւերականութիւնը կասկածելի կհամարեն, ինչպէս և յաճախ անվաւեր ու աղաւաղ են համարել և չեն հրատարակել շատ այդպիսի գրութիւններ, որոնց մէջ Քաղկեդոնի մասին խօսք կայ և որ մենք հետզհետէ հրատարակել կաշխատենք, նոցա արժէքը ցոյց տալով: Տեսնենք:

Խմաստասիրի այս ծառը գտնուում է Մայր Աթոռի Ստանադարանի երկու ձեռագիրներէ մէջ՝ հ. 58, եր. 144 շրջ.—148 շրջ. և հ. 100, եր. 80—86 (Պէտրգեան ժողովածու): Արկու ձեռագիրներն ևս նոր գրութիւն են, հաւանականաբար երկրորդան Սիմէօն կաթողիկոսի ժամանակից, թէ և միայն 58 հ. նունի նշանակած. «Եւ օրինակեցաւ ի հայրապետութեան Տեառն Սիմէօնի սրբազան կաթողիկոսի ամենայն Հայոց ի ս. Էջմիածին. ՌԻՓԶ. Թուոյ մայիս Ի.»: Նոցա բովանդակութեան հիմնական մասը կազմում է «Թղթոց զիրք կոչուած» հետաքրքիր ժողովածուն, որի մասին յոյս ունինք ուրիշ անգամ մանրամասն ծանօթութիւն տալ երբ առիթ լինի նորանից ուրիշ նիւթեր հրատարակել: Արդի հրատարակութիւնը կատարուում է 100 հ. ի վերայ միւսի համեմատութեամբ և միայն նորա ուշադրութեան արժանի տարբերութիւնները նշանակելով:

Պարտք ենք համարում մի քանի խօսք ևս այն խմատուն բաների մասին ասել, որ ներկայ խնդրի առթիւ Մշակի այս տարուայ 37 համարում ժամանակի բարձրութեան վերաջից մեզ հասկացնել էր կամեցել նորա աշխատակիցը:—Մի բան խոստովանում ենք, դժուար է մեզ հասկանալ թէ ինչու մեր լուսաւոր ժամանակի այն զաւակը, որին «ամենին չէ հետաքրքրում» իրեն մկրտող* և

անուն տուող եկեղեցւոյ դաւանութիւնը. որ եկեղեցւոյ և կրօնի հետ կապ ունեցող ամէն խնդրի վերայ իրեն հին խաւար միջնադարեան բաների վերայ է նայում, որի աչքում եկեղեցին առ առաւելն ընտրական պայքարների համար միայն նշանակութիւն կարող է ունենալ՝ իրաւունք է համարում այնու ամենայնիւ իրեն դատաւճիւղներ կարգաւ այդ եկեղեցւոյ գլխին մատի ծայրով լուծել նորա ներքին կազմութեան վերաբերեալ ամենանուրբ խնդիրները: Ուրիշ չհասկացած բաների մասին նա այդպէս թեթեւ դատողութիւններ տալ չի համարձակուի: Նա գիտէ, որ երբ բնագետը օրեր տարիներ անցնում է մի ճճի քննելով, կամ հնագետը մի քարի մի փայտի կտոր զըննելով՝ մեծ և նշանաւոր դործ է կատարում, որին իւր խելքը չի հասնի, բայց երբ խօսքը ներքին հոգեկան կեանքի ամենատեղեւոր հարցերի մասին է, եկեղեցական պատմութեան մի նշանաւոր հարցի մասին՝ նա չի քաշուում բարձրից արհամարհանօք լի խրատներ կարգաւ այդպիսի շնչին բաներով զբաղողների գլխին. թէ և նորա հասկացողութիւնը պատմութեան մասին այնքան շնչին, այնքան մոայլ է, որ նորա կարծիքով՝ «Հնութիւնը ազգը միացնող, ազգին մի տեսակ կերպարանք տուող ոյժ համարում էր լոկ կրօնը»։—Մեր համեստ կարծիքով այդ հնութիւնը հասկանալու համար ուսումնասիրել պէտք է այն և ոչ թէ կուտուրա, կղերականութիւն, միստիա և այլ այդպիսի լուսաւոր բառերով աչք շլացնել: Իսկ թէ ինչքան կարեւոր է այդ ուսումնասիրութիւնը, այդ հասկացողութիւնը հէնց այժմ մեր օրերում՝ միթէ չէք գգում: Ժամանակ է այս հասկանալ, ժամանակ է հասկանալ թէ որտեղ են մեր գոյութեան արմատները և որտեղից է մեզ մահացու վտանգ սպառնում, հասկանալ, որ եթէ անձնասպանութիւնը ամենամեծ մեղքն է ի դէմս ամբողջ ազգի կատարած անձնասպանութիւնը առաքելութիւն համարուիլ չէ կարող:—Արձանական խնդիրներ պարզելը կրօնական թշնամութիւն սերմանել չէ նշանակում: Քրիստոս է եղբայրութիւն

* Ներ իսկ քերանից ասուած դաւանութեան հիման վերայ:

բառի հեղինակը, և Նորա ոգւով Նորա ծըմարիտ վարդապետութիւնը հասկանալ աշխատել եղբայրատեցութիւն չէ:

Ինչ վերաբերում է Հանդէս ամսօրեայ թերթի ապրիլ հ.-ում (եր. 123) արած բացառանքութիւններին՝ դէմը նման բացառանքութիւններ դնել համապատասխան չէ մեր ճաշակին և ակորժակին:

Կ. Վ.



ԵԿԵՂԵՅՑԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ.

ԱՄՍՕՐԵԱՅ ՏԵՍՈՒԹԻՒՆ.

Ս. Բարութեան մեծագայծառ տօնն այս տարի բոլոր քրիստոնեայ աշխարհը միասին կատարեց, այգպիսի զուգագիպութիւն յաճախ չէ հանգիպում: Երեւի այս զուգագիպութիւնն ևս ժամանակի նշաններից մէկն է, որոնցով այնքան հարուստ է մեր դարավերջը: Քրիստոնէական եկեղեցու ընդհանուր պատմութեան մէջ մեր ժամանակը նշանաւոր է այնու, որ օրէ ցօր աւելի յաճախ են հնչում միութիւն և եղբայրութիւն անունները: Քրիստոնէական եկեղեցիների միութեան խնդիրը մեր ժամանակի օրակարգի խնդիրներիցն է համարուում: Թէպէտ և սխալ ըմբռնողութեամբ, ուրիշներին ի միութիւն հրաւիրող եկեղեցիք միութիւնը հպատակութիւն ևն հասկանաւոր և փոխանակ հոգեւոր միութեան, ձեւական միութիւն են պահանջում: Չենք կարող անտես անել և իսկական միութեան նշանները, որոնց յաճախումը միայն յոյս կարող է տալ մեզ, որ ապագային քրիստոնեայք աւելի հոգեւոր միութեան պիտի կշիռ տան, քան թէ արտաքին: Մեր ժամանակի քրիստոնէից հոգեւոր միութեան գեղեցիկ ապացոյցներից մէկն էլ և գլխաւորն այն սէրն է, որ ցոյց տուին բոլոր աշխարհիս քրիստոնեայ պաւնութիւնները թշուառ և հալածուած հայ քրիստոնէից: Այսօր սկսած հեռաւոր Ամերիկայի բողոքական եկեղեցիներից մինչև Հռոմ, ուր իշխում է զաւանական բռնակալութիւնը, ամենուրեք աղօթում են հալածուած հայ եկեղեցու հօտի համար և սպեղանիք են դնում նրա վերքերին: Ս. Բարութեան տօնին ամեն քրիստոնեայք ապագայ կեանքի համար նոր յոյսերով են լցուում, իսկ մենք, որ յուսահատութեան անգունգին էինք հասել, նորից շունչ և կեանք ենք առնում Փրկչի անուան համար մեր նահատակութիւնը շարունակելու, անյողգողդ յոյս տածելով, որ ինչպէս նա մահուան յաղթեց, այնպէս էլ մենք պիտի յաղթենք մահուան իշխանութեան, որի բռնութիւնը մեր վրայ այսքան տեսական և այսքան զարհուրելի է:

ԿԱԹՈՒԼԻԿ ԵԿԵՂԵՑԻ

— Ինչպէս „Annales Catholiques“ թերթն հաղորդում է, վերջերս պապի և ուսաց կառավարութեան յարաբերութիւնները շատ լուացել են: Վատիկանի ուսական գեղարար պ. Իզիդորին պապին է մատուցել կայսերական մի նամակ, որի մէջ առկա եղած խնդիրների բարոյք լուծումն է խոստացուած: այդ խնդիրներն են կաթոլիկ հոգեւոր դպրոցների վարչութեան և պապի ու Ռուսաստանի կաթոլիկ եպիսկոպոսների յարաբերութեանց խնդիրը:

— Փրանսիացի կրօնաւոր հ. Հարմէտան, որ արեւելից դպրոցների գործոց ընդհանուր տեսուչն է, պապի քարտուղար ծիրանաւոր Ռամպոլլայից մի նամակ է ստացել, որի մէջ ծիրանաւորը պապի օրհնութիւնն է յայտնում հ. Հարմէտանին յօգուտ հայոց սկսած հանգանակութեան համար: Ահա այդ հետաքրքրական նամակը:

Ու երաւաւ տուելի հայր:

Չեր փետրուարի 25-ից գրած պատուական նամակի ըզմանակութիւնն շտապեցի հաղորդելու Սուրբ Յօրն (այսինքն պապին): այդ մեծ գոհունակութիւն պատճառեց նորին Սրբութեան: Նա չկարողացաւ իւր հիացմունքը չյայտնել Փրանսիայի կաթոլիկների պատասձեւունութեան վրայ, որոնք ձեր հրաւերից յետոյ, քառասուն օրուայ կարճ միջոցում 82,700 Քրանս. (Ժ. Խմբ. այժմ 120,700 Քր.) նշանաւոր գումարը ստորագրութեան յօգնութիւն հայ ազգի:

Ոչ ոքի անյայտ չին մեծափառ քահանայապետի արդէն ևւ այժմ իսկ գործ դրած ջանքերն այդ հաւածուած ժողովրդի վիճակը քարոտելու համար, ոչ էլ այն օժանդակութիւնները, որ քահանայապետը և նրանց: Վերջին կոնսիստորիայի ժամանակ ծիրանաւորներին ուղղեալ ծառի մէջ նա կրկին մի հաղորդաւոր վկայութիւն տուաւ այն կաթոլիկութեան, որ ունի դէպի նոցա:

Այս իսկ պատճառներով պէտք է գովել Չեր վերապատուութեան նախամօք որով զուր միւլնոյն նպատակի համար աշխատում էք:

Իաց յայտնաւ նորա ցանկութիւնն է, որ ձեր Փրանսիացիներին ուղղած հրաւերների նման այլ հրաւերներ նա ուղղուին ուրիշ ազգերի, և նա վստահ է, որ այդ երկրների կաթոլիկները իրենց առատաձեռնութեամբ պիտի մրցեն Փրանսիացոց հետ:

Այս յուսով նա ի նշան իւր հայրական սիրոյ, ուղարկում է ձեզ ի սրտէ իւր առաքելական օրհնութիւնը, ինչպէս և բոլոր այն անձանց, որոնք մի աշխարհի սուրբ գործի գլուխ են կանգնած, ինչպէս և բոլոր հաւատացեալներին, որոնք այդ նպատակով նուիրաբերութիւններն են արել և կամ պիտի անեն:

Ընդունեցէք բաց աստի, իմ շնորհատրութիւններս այն առատութեան համար, որով Տէքն օրհնել է ձեր ձեռնարկած գործը...

Մարտի 4. 1896.

Մ. Ժիրանաւոր Ռամպոլլայ:

Այս հանգանակութեան մասին յայտնի է հայ ընթերցողներին հայ կաթոլիկների պատրիարք գերապայծառ Աղաբանի բռնած ընթացքը: Կինչդեռ